



## Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2006թ. հոկտեմբերին /վերլուծություն/

2006թ. հոկտեմբերին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 10955 գործարքներ, որոնց քանակը 2005թ. հոկտեմբերի համեմատ աճել է 9.0%-ով, իսկ 2006թ. սեպտեմբերի համեմատ՝ 16.2%-ով:

2006թ. հոկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2006թ. հոկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2006թ. հոկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4732 օտարման գործարքների 88.3% կազմել են առուվաճառքները, 11.1%՝ նվիրատվությունները և 0.6%՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 33.7%

արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 36.1% հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ:

2006թ. հոկտեմբերին, 2006թ. սեպտեմբերի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակը աճել է 16.1%-ով, իսկ 2005թ. հոկտեմբերի համեմատ՝ 18.4%-ով: 2006թ. հոկտեմբերին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 66.9% արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում, 2006թ. սեպտեմբերի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 7.8%-ով, իսկ 2005թ. հոկտեմբերի համեմատ՝ 8.8%-ով:

2006թ. հոկտեմբերին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները և դրանց փոփոխման միջակայքերը.

Համայնքներ	Նվազագույն և առավելագույն գները 2006թ. հոկտեմբերին /դրամ/	Միջին գները /դրամ/		
		հոկտեմբեր 2005թ.	հոկտեմբեր 2006թ.	սեպտեմբեր 2006թ.
Կենտրոն	178900-900000	308500	397000	396600
Արաբկիր	114300-771000	253400	313500	312700
Քանաքեռ Զեյթուն	111100-362900	156800	199000	195000
Նոր-Նորք	92300-327800	150300	181600	179600
Ավան	99100-226300	132000	171100	169400
Էրեբունի	103800-293400	131100	169000	162100
Շենգավիթ	105100-399400	159400	191600	191100
Դավթաշեն	118000-282100	160400	203500	203200
Աջափնյակ	103800-451100	150100	184400	180700
Մալաթիա-Սեբաստիա	90300-271900	146500	174200	173900
Նուբարաշեն	57400-137500	78600	112600	112600
<b>Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/</b>	<b>57400-900000</b>	<b>166100</b>	<b>208900</b>	<b>207000</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2006թ. հոկտեմբերին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2006թ. սեպտեմբերի համեմատ աճել են 0.9%:

2006թ. հոկտեմբերին մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 518 բնակարաններ, որոնց քանակը 2006թ. սեպտեմբերի համեմատ աճել է 6.8%-ով, իսկ 2005թ. հոկտեմբերի համեմատ՝ 5.1%-ով:

2006թ. հոկտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները և դրանց փոփոխման միջակայքերը.

Մարզեր	Քաղաքներ	Նվազագույն և առավելագույն գները 2006թ. հոկտեմբերին /դրամ/	Միջին գները /դրամ/		
			հոկտեմբեր 2005թ.	հոկտեմբեր 2006թ.	սեպտեմբեր 2006թ.
Արագածոտն	Աշտարակ	60300 - 95000	49200	76200	72600
	Ապարան	18000 - 28000	22700	26600	26500
	Թալին	13600 - 34800	21500	27900	26600
Արարատ	Արտաշատ	39100 - 137780	38600	60900	58000
	Մասիս	36000 - 96100	50200	70100	66800
	Վեդի	22600 - 65300	32900	48000	47000
	Արարատ	19300 - 75100	36400	48000	45100
Արմավիր	Վաղարշապատ	71000 - 159100	73200	98600	93900
	Արմավիր	38700 - 125200	44000	66900	63700
	Մեծամոր	33000 - 67600	24500	44000	44000
Գեղարքունիք	Սևան	28300 - 88200	29500	44700	44300
	Գավառ	20400 - 30000	21800	29100	29100
	Մարտունի	22500 - 67500	35900	40700	38800
	Վարդենիս	13500 - 30000	18700	22100	21000
	Ճամբարակ	5900 - 31100	10700	13900	13200
	Վանաձոր	27000 - 115200	39300	56100	56100
Լոռի	Ստեփանավան	15000 - 31700	22300	27300	26000
	Սյիտակ	30300 - 57300	26700	40300	40300
	Այվերդի	9600 - 25000	18000	22200	21100
	Տաշիր	11300 - 33300	19800	21800	20800
	Թումանյան	4100 - 11300	5200	5400	5400
	Շամլուղ	2300 - 8300	2700	3000	3000
	Ախթալա	6800 - 16000	10300	10900	10900
	Արովյան	55000 - 184700	75600	114700	109200
Կոտայք	Նոր Հաճն	53100 - 101000	54900	78000	74300
	Բյուրեղավան	22700 - 79800	34900	55700	53000
	Եղվարդ	50200 - 88200	46500	70600	69700
	Հրազդան	20900 - 73400	27400	41700	41400
	Ծաղկաձոր	68000 - 88800	55600	80600	76800
	Չարենցավան	26300 - 78400	34500	49000	46700
	Գյումրի	25100 - 127100	41400	55400	52800
Շիրակ	Արթիկ	19600 - 61500	25300	35900	34800
	Մարալիկ	8400 - 30000	21400	22700	21600
	Գորիս	26800 - 79300	44000	54700	52500
Սյունիք	Կապան	29000 - 91400	31300	53500	52400
	Սիսիան	26700 - 62700	27100	46000	44700
	Մեղրի	20000 - 43300	22300	33600	33600
	Ագարակ	9000 - 31100	17600	21900	20900
	Քաջարան	20200 - 45600	16500	28300	28300
	Դաստակերտ	4500 - 11300	6300	6800	6800
	Վայք	39500 - 52200	28900	50100	42400
Վայոց Ձոր	Եղեգնաձոր	33800 - 117000	41200	63400	63400
	Ջերմուկ	43600 - 189200	44800	76100	72500
	Դիլիջան	28100 - 95800	32900	54900	52300
Տավուշ	Իջևան	40600 - 99900	37300	66000	62900
	Բերդ	22100 - 70600	25700	30500	30500
	Նոյեմբերյան	8500 - 25000	14200	24300	23100
	Այրում	12000 - 22000	10000	18000	18000

2006թ. հոկտեմբերին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի շուկայական միջին գները 2006թ. սեպտեմբերի համեմատ աճել են 3.8%:

2006թ. հոկտեմբերին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 519 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 110, մյուս մարզերում միասին վերցրած՝ 409: 2006թ. սեպտեմբերի համեմատ անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը աճել է 13.6%-ով, ընդ որում Երևանում նվազել է 12.7%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած աճել՝ 23.6%-ով: 2005թ. հոկտեմբերի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 4.4%-ով, ընդ որում Երևանում նվազել է 16.7%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած աճել՝ 12.1%-ով:

2006թ. հոկտեմբերին Երևան քաղաքի համայնքներում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը, և դրանց փոփոխման միջակայքերը.

Համայնքներ	Նվազագույն և առավելագույն գները 2006թ. հոկտեմբերին /դրամ/	Միջին գները /դրամ/		
		հոկտեմբեր 2005թ.	հոկտեմբեր 2006թ.	սեպտեմբեր 2006թ.
Կենտրոն	135000-900200	332800.0	399100	397900
Արաբկիր	90000-450100	266900.0	315500	314200
Քանաքեռ-Զեյթուն	67500-270100	159000.0	200400	196100
Նորք-Մարաշ	90000-450100	180400.0	191700	189900
Ավան	90000-360100	136700.0	172800	170600
Էրեբունի	67500-225100	136800.0	170300	163200
Շենգավիթ	67500-202500	163600.0	193400	192300
Դավթաշեն	90000-405100	165100.0	205600	204600
Աջափնյակ	67500-270100	155500.0	186000	182200
Մալաթիա-Սեբաստիա	67500-405100	148200.0	176700	175700
Նուբարաշեն	40500-155000	86200.0	115300	114200
<b>Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/</b>	<b>40500-900200</b>	<b>175600.0</b>	<b>211500</b>	<b>209200</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2006թ. հոկտեմբերին անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները 2006թ սեպտեմբերի համեմատ աճել են 1.1 % :

2006թ. հոկտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/ և դրանց փոփոխման միջակայքերը.

Մարզեր	Քաղաքներ	Նվազագույն և առավելագույն գները 2006թ. հոկտեմբերին /դրամ/	Միջին գները /դրամ/		
			2005թ. հոկտեմբեր	2006թ. հոկտեմբեր	2006թ. սեպտեմբեր
Արագածոտն	Աշտարակ	29100 - 98000	50600	77700	74100
	Ապարան	13500 - 36000	24000	27900	27900
	Թալին	13600 - 36000	23000	28800	27600
Արարատ	Արտաշատ	22500 - 141000	39700	62500	59300
	Մասիս	25000 - 98000	52200	71200	68100
	Վեդի	22500 - 67500	34200	49800	48000
	Արարատ	22500 - 76800	38100	49400	46400
Արմավիր	Վաղարշապատ	54100 - 164200	75000	100200	95900
	Արմավիր	22500 - 126000	45700	68100	65300
Գեղարքունիք	Սևան	18000 - 90600	33600	46400	45400
	Գավառ	10000 - 37800	24100	30700	30200
	Մարտունի	22200 - 68000	38500	42000	40200
	Վարդենիս	11000 - 32500	21400	23200	22500
	Ճամբարակ	4500 - 32600	11700	14800	14800
Լոռի	Վանաձոր	23200 - 116800	40200	58600	58000
	Ստեփանավան	13500 - 40200	26700	28500	27700
	Սպիտակ	20000 - 58600	28400	41500	41300
	Ալավերդի	9000 - 31500	19200	23300	22200
	Տաշիր	9000 - 36500	20900	23000	21900
	Թումանյան	4500 - 18000	6600	7200	7000
	Շամլուղ	2300 - 13500	4100	4500	4300
	Ախթալա	9000 - 22500	11800	12500	12400
Կոտայք	Աբովյան	45500 - 191600	80500	116000	111200
	Նոր Հաճն	42500 - 105800	56600	79300	75300
	Բյուրեղավան	22200 - 81400	36100	56900	54100
	Եղվարդ	30200 - 90300	49300	72100	71000
	Հրազդան	18000 - 74000	29800	43100	42500
	Ծաղկաձոր	40000 - 112500	56700	82200	78000
	Զարենցավան	18000 - 79300	37900	50200	47900
Շիրակ	Գյումրի	28200 - 129000	43000	56600	54000
	Արթիկ	13300 - 62400	27500	37100	35800
	Մարալիկ	13500 - 40000	23400	24300	24100
Սյունիք	Գորիս	18000 - 79900	44900	56100	54100
	Կապան	22000 - 94000	33800	54900	53400
	Միսիան	20000 - 66400	28000	47700	45700
	Մեղրի	13500 - 44800	23800	35400	34600
	Ագարակ	13300 - 36000	19900	23200	22000
	Դաստակերտ	4500 - 18000	8600	8900	8800
Վայոց Ձոր	Վայք	26000 - 55600	29800	51200	43400
	Եղեգնաձոր	22200 - 118400	44700	64800	64600
	Ջերմուկ	26500 - 191600	30300	39700	38700
Տավուշ	Դիլիջան	26600 - 97500	34600	56100	53500
	Իջևան	22200 - 101100	38700	67100	64100
	Բերդ	20000 - 71200	26400	31600	31400
	Նոյեմբերյան	9000 - 31500	15100	25500	23900
	Այրում	5200 - 28000	10700	19200	19200

2006թ. հոկտեմբերին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2006թ. սեպտեմբերի համեմատ աճել են 3.9 %:

Ընդհանուր առմամբ, 2006թ. հոկտեմբերին հանրապետությունում օտարվել են 1962 միավոր /2026.77 հա/ հողեր, որից Երևանում՝ 142 միավոր /14.40 հա/, այդ թվում ՀՀ հողային օրենսգրքի փոփոխության 23-րդ հոդվածի համաձայն, օտարվել են 67 միավոր /7.30 հա/ հողեր, որից Երևանում՝ 40 միավոր /5.27 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 931 միավոր /1925.07 հա/ ընդհանուր մակերեսով: Երևանում գյուղատնտեսական նշանակության հողերի օտարման գործարքներ չեն գրանցվել:
- բնակելի կառուցապատման հողեր՝ 696 միավոր /61.30 հա/, որից Երևանում՝ 83 միավոր /5.22 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 310 միավոր /38.23 հա/, որից Երևանում՝ 57 միավոր /9.09 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 14 միավոր /1.30 հա/, որից Երևանում՝ 2 միավոր /0.09 հա/,
- հատուկ պահպանվող տարածքի հողեր 1 միավոր /0.08 հա/: Երևանում հատուկ պահպանվող տարածքի հողերի օտարման գործարքներ չեն գրանցվել,
- էներգետիկայի օբյեկտների հողեր 10 միավոր /0.79 հա/ ընդհանուր մակերեսով: Երևանում էներգետիկայի օբյեկտների հողերի օտարման գործարքներ չեն գրանցվել:

2006թ. հոկտեմբերին հանրապետությունում օտարված հողերից 1863 միավորի /1964.05 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 135 միավոր /14.11 հա/, նվիրատվության գործարքներ՝ 82 միավորի /55.77 հա/, որից Երևանում՝ 4 միավոր /0.19 հա/ և փոխանակության գործարքներ՝ 17 միավորի /6.94 հա/, որից Երևանում՝ 3 միավոր /0.11 հա/:

Հանրապետությունում 2006թ. հոկտեմբերին, 2005թ. հոկտեմբերի համեմատությամբ, հողերի առուվաճառքի գործարքների քանակական աճը կազմել է 64.1%: Ընդ որում գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը աճել է 71.1%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ՝ աճել է 55.2%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել է 14 անգամ, հատուկ պահպանվող տարածքի հողերի նկատմամբ՝ նվազել 50.0%-ով, էներգետիկայի օբյեկտների հողերի նկատմամբ՝ աճել 10 գործարքով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 1098.06 հա, որից 1089.82 հա գյուղատնտեսական նշանակության են: Վաճառված հողերի քանակի 38.2% կամ 712 գործարքներ /827.67 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 31 գործարքներ /5.01 հա/, իսկ 61.6%-ը կամ 1148 միավորը /1135.62 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 101 միավոր /8.34 հա/: 2006թ. հոկտեմբերին Երևանում արձանագրվել են վարձակալության իրավունքի վաճառքի 3 գործարք /0.76 հա/:

Ստորև ներկայացվում է 2006թ. հոկտեմբերին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունը ըստ մարզերի, որտեղ ներառված չեն հատուկ պահպանվող տարածքների, էներգետիկայի օբյեկտների հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	<i>Չետական և համայնքային սեփականություն հանդիսացող</i>								<i>Մասնավոր սեփականություն հանդիսացող</i>							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	2	0.09	7	0.41	22	4.50	0	0.00	0	0.00	70	4.52	31	3.81
Արագածոտն	66	199.90	0	0.00	5	0.80	14	0.47	52	71.11	0	0.00	45	4.31	2	0.31
Արարատ	38	63.05	3	0.03	88	6.25	64	2.44	85	72.74	0	0.00	87	7.74	3	0.07
Արմավիր	76	382.96	5	0.46	6	0.62	33	0.69	103	706.86	0	0.00	80	6.43	4	0.04
Գեղարքունիք	2	2.00	1	0.35	8	0.88	13	0.84	15	8.53	0	0.00	12	2.24	2	0.91
Լոռի	5	1.67	1	0.05	8	0.47	14	7.47	92	48.14	0	0.00	17	2.28	9	0.22
Կոտայք	74	98.53	1	0.16	3	0.37	33	7.43	158	82.15	1	0.16	165	15.93	6	4.10
Շիրակ	15	34.44	0	0.00	24	0.92	18	2.28	28	31.26	0	0.00	5	0.58	0	0.00
Սյունիք	0	0.00	0	0.00	0	0.00	10	0.78	32	49.73	0	0.00	2	0.31	2	0.01
Վայոց Ձոր	14	4.33	0	0.00	5	0.19	15	0.63	12	4.64	0	0.00	7	0.65	3	0.07
Տավուշ	0	0.00	0	0.00	4	0.19	4	0.15	9	4.35	0	0.00	9	1.41	0	0.00
Ընդամենը	290	786.88	13	1.14	158	11.10	240	27.68	586	1079.51	1	0.16	499	46.40	62	9.54

Ստորև ներկայացվում է 2006թ. հոկտեմբերին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունը ըստ մարզերի և ըստ հողերի տեսակների, բացառությամբ հատուկ պահպանվող տարածքների և էներգետիկայի օբյեկտների հողերի.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	<i>Ուղղակի վաճառք</i>								<i>Աճուրդ վաճառք</i>									
	Ընդամենը		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի								բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/		
Երևան	27	4.10	2	0.09	6	0.34	19	3.67	4	0.90	0	0.00	0	0.00	1	0.07	3	0.83
Արագածոտն	5	0.08	0	0.00	0	0.00	5	0.08	80	201.10	66	199.90	0	0.00	5	0.80	9	0.40
Արարատ	15	0.79	0	0.00	0	0.00	15	0.79	178	70.97	38	63.05	3	0.02	88	6.25	49	1.65
Արմավիր	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	112	269.23	68	267.46	5	0.46	6	0.62	33	0.69
Գեղարքունիք	5	0.53	1	0.35	2	0.16	2	0.02	19	3.54	2	2.00	0	0.00	6	0.72	11	0.82
Լոռի	3	3.552	0	0.00	1	0.002	2	3.55	25	6.11	5	1.67	1	0.05	7	0.47	12	3.92
Կոտայք	13	1.25	1	0.16	1	0.14	11	0.95	97	105.13	73	98.44	0	0.00	2	0.22	22	6.47
Շիրակ	4	0.11	0	0.00	3	0.10	1	0.01	53	37.53	15	34.44	0	0.00	21	0.82	17	2.27
Սյունիք	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	10	0.78	0	0.00	0	0.00	0	0.00	10	0.78
Վայոց Ձոր	6	0.10	0	0.00	0	0.00	6	0.10	28	5.05	14	4.33	0	0.00	5	0.19	9	0.53
Տավուշ	6	0.26	0	0.00	3	0.12	3	0.14	2	0.09	0	0.00	0	0.00	1	0.08	1	0.01
Ընդամենը	84	10.77	4	0.60	16	0.86	64	9.31	608	701.43	281	671.29	9	0.53	142	10.24	176	18.37

Հանրապետությունում 2006թ. հոկտեմբերին արձանագրվել են նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 9 գործարքներ /115.59 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2006թ. հոկտեմբերին 2005թ. հոկտեմբերի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը աճել է 2.1 անգամ: Ընդ որում Երևանում նվազել է 63.6%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած աճել է 2.2 անգամ: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը աճել է 2.5 անգամ, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ՝ 7.6%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ՝ 3.8 անգամ, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 9 անգամ, էներգետիկայի օբյեկտների հողերի նկատմամբ՝ 4 գործարքով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2006թ. հոկտեմբերին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (տարածքային շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ	54	162.00	34.8	3816.7	411.2	31	53.28	362.2	6772.5	2293.9
Ապարան						5	7.31	90.6	767.6	336.5
Թալին	12	37.90	34.2	183.3	54.5	9	4.72	90.6	758.5	324.5
Ծաղկահովիտ						3	4.83	77.0	948.2	158.4
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ	11	12.32	10.0	2675.0	501.9	31	9.41	335.1	5418.0	1220.2
Մասիս	19	30.84	30.2	1040.0	177.8	31	53.29	181.1	6772.5	1602.8
Վեդի	8	19.89	30.1	1002.0	281.1	23	10.04	203.8	4515.0	1012.2
<b>Արմավիրի մարզ</b>										
Արմավիր	37	51.64	30.0	1598.6	532.2	56	35.36	294.3	4063.5	804.2
Բաղրամյան	14	166.35	33.8	35.4	34.4	15	650.30	90.6	677.3	504.1
Վաղարշապատ	17	49.47	33.0	220.0	47.5	30	19.42	443.7	9030.0	1330.8
<b>Գեղարքունիքի մարզ</b>										
Գավառ						5	2.95	190.2	496.7	330.2
Ճամբարակ	2	2.00	553.0	1000.0	776.5			45.3	541.8	140.5
Մարտունի						4	2.33	45.3	1806.0	448.4
Սևան						3	0.52	45.3	451.5	188.3
Վարդենիս						3	2.73	27.2	532.8	207.8
<b>Լոռու մարզ</b>										
Ալավերդի						73	30.95	163.0	2483.3	913.1
Գուգարք	3	1.32	362.5	377.9	368.6	12	7.18	226.4	2709.0	890.1
Սպիտակ	2	0.35	766.0	766.0	766.0			226.4	1490.0	487.5
Ստեփանավան						7	10.01	90.6	2257.5	342.1
Տաշիր								45.3	451.5	197.8
<b>Կոտայքի մարզ</b>										
Աբովյան	15	10.52	80.0	1172.5	493.7	53	18.63	271.7	11287.5	2952.1
Եղվարդ	23	58.75	74.2	12131.6	2138.2	76	47.21	172.1	11287.5	2068.4
Հրազդան	35	29.17	75.3	584.3	362.9	16	7.93	113.2	2709.0	752.4
<b>Շիրակի մարզ</b>										
Ախուրյան	3	6.60	50.0	252.0	165.3	12	13.11	249.0	1693.1	409.2
Ամասիա						1	2.85	36.2	237.0	100.7



Անի	9	25.59	134.3	154.1	143.3	14	15.05	108.7	361.2	208.2
Աշոցք								45.3	112.9	109.2
Արթիկ	3	2.25	175.0	316.0	222.0	1	0.25	63.4	1083.6	158.1
Սյունիքի մարզ										
Գորիս						15	17.84	90.6	673.3	315.5
Կապան								54.3	841.6	214.6
Մեղրի								181.1	1784.2	425.2
Սիսիան						17	31.90	45.3	631.2	190.4
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	13	4.23	41.0	1269.5	280.2	8	1.28	117.7	2524.8	1220.2
Վայք	1	0.10	37.2	37.2	37.2	4	3.36	54.3	1430.7	478.8
Տավուշի մարզ										
Բերդ						1	0.24	45.3	841.6	325.5
Իջևան								240.0	1683.2	775.6
Նոյեմբերյան						8	4.11	45.3	3509.5	455.3

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2006թ. հոկտեմբերին բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	5	7960.0	73.3	178.6	136.2	41	40214.0	113.2	3612.0	2100.8
Ապարան						4	2847.0	113.2	632.1	175.4
Թալին								45.3	361.2	77.4
Ծաղկահովիտ								45.3	361.2	67.3
Արարատի մարզ										
Արտաշատ	3	2500.0	181.0	271.1	240.8	23	26348.5	135.8	2709.0	798.5
Մալիս	85	59974.0	188.1	1553.3	1175.1	53	40980.0	135.8	9030.0	1015.6
Վեդի						11	10102.0	113.2	993.3	580.1
Արմավիրի մարզ										
Արմավիր	3	3750.0	291.6	357.2	313.5	15	12935.0	135.8	2257.5	942.4
Բաղրամյան						3	2920.0	81.5	270.9	114.3
Վաղարշապատ	3	2490.0	750.0	812.5	770.8	62	48395.0	135.8	4515.0	1300.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	6	7200.0	191.7	200.0	197.2	1	2750.0	135.8	903.0	320.4
Ճամբարակ						2	2179.0	45.3	135.5	85.4
Մարտունի						3	2790.0	90.6	451.5	186.8
Սևան						1	3600.0	90.6	903.0	125.2
Վարդենիս						5	11130.0	45.3	225.8	90.2
Լոռու մարզ										
Ալավերդի						2	3170.0	67.9	270.9	102.7
Գուգարք	2	1433.0	68.5	800.0	434.3	7	6828.0	67.9	2347.8	516.6
Սյլիտակ	5	3290.0	76.6	222.1	105.7	5	5740.0	63.4	451.5	107.3
Ստեփանավան						3	7100.0	45.3	270.9	90.4
Տաշիր								45.3	135.5	66.3

Կոտայքի մարզ										
Աբովյան						70	66363.0	135.8	6772.5	1555.8
Եղվարդ	1	500.0	1650.0	1650.0	1650.0	80	76801.0	135.8	6772.5	1671.5
Հրազդան	1	1720.0	220.9	220.9	220.9	14	14725.0	135.8	9030.0	1090.1
Շիրակի մարզ										
Ախուրյան	16	3814.0	800.0	4496.4	2225.2	1	1670.0	113.2	1535.1	290.8
Ամասիա						2	3371.0	45.3	135.5	68.5
Անի								67.9	180.6	88.6
Աշոցք								40.8	135.5	56.8
Արթիկ	5	4370.0	115.0	291.9	162.4	2	800.0	67.9	925.6	135.5
Սյունիքի մարզ										
Գորիս						1	1440.0	67.9	541.8	215.5
Կապան								67.9	632.1	193.6
Մեղրի								67.9	406.4	108.8
Սիսիան						1	1680.0	67.9	406.4	125.2
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	5	1900.0	290.7	687.5	607.6	7	6505.0	67.9	1128.8	235.5
Վայք								77.0	632.1	110.2
Տավուշի մարզ										
Բերդ								45.3	632.1	82.5
Իջևան	1	750.0	283.5	283.5	283.5	7	12360.0	67.9	1354.5	344.5
Նոյեմբերյան						2	1700.0	45.3	632.1	110.4

2006թ. հոկտեմբերին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել է նախկինում անհատույց սեփականաշնորհման 9 գործարքներ 1.74 հա մակերեսով, ընդ որում 7-ը՝ Արարատի /1.55 հա/, 1-ական՝ Գեղարքունիքի /0.06 հա/ և Լոռվա /0.13 հա/ մարզերում:

2006թ. հոկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 738 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 6.7%: Ընդ որում, վարձակալության գործարքների 34.3% իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2006թ. հոկտեմբերին 2006թ. սեպտեմբերի համեմատ անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը աճել է 42.5%-ով, իսկ 2005թ. հոկտեմբերի համեմատ նվազել՝ 49.5%-ով:

2006թ. հոկտեմբերին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 58 բնակարանների, 27 անհատական բնակելի տների, 281 հասարակական, 44 արտադրական նշանակության օբյեկտների, 325 միավոր /4873.24 հա/ հողերի, 3 ավտոտնակների վարձակալության գործարքներ:

2006թ. հոկտեմբերին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 38 վարձակալության գործարքների քանակը 2006թ. սեպտեմբերի համեմատ աճել է 3.2 անգամ, իսկ 2005թ. հոկտեմբերի համեմատ՝ 90.0%-ով:

2006թ. հոկտեմբերին հանրապետությունում վարձակալված 4873.24 հա հողերից 3.38 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 4869.86 հա հողերի 99.3% կամ 4836.71 հա, կազմում են գյուղատնտեսական նշանակության, 22.65 հա՝ բնակավայրերի, 9.47 հա՝ ընդերքօգտագործման, 1.04 հա՝ էներգետիկային օբյեկտների հողեր: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Շիրակի մարզում՝ 3709.47 հա, որից 3699.19 հա՝ գյուղատնտեսական նշանակության: Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 4348.00 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2006թ. հոկտեմբերին համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական

նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն՝  
 րստ մարզերի.

<b>Մարզի անվանումը</b>	<b>Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական.նշ հողերի</b>		<b>Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական.նշ հողերի</b>	
	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/
Արագածոտն	6	289.00	34	64.89
Արարատ	0	0.00	14	58.14
Արմավիր	0	0.00	12	63.50
Գեղարքունիք	1	355.00	13	21.92
Լոռի	1	2.00	51	81.88
Կոտայք	0	0.00	9	104.91
Շիրակ	1	3667.00	28	32.19
Սյունիք	1	35.00	1	0.07
Վայոց Ձոր	0	0.00	7	61.12
Տավուշ	0	0.00	5	0.10
<b>Ընդամենը</b>	<b>10</b>	<b>4348.00</b>	<b>174</b>	<b>488.72</b>

2006թ. հոկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1294 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 11.8%: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2006թ. սեպտեմբերի համեմատ աճել է 19.8%-ով, իսկ 2005թ. հոկտեմբերի համեմատ՝ 33.3%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /51.8%/, առանձնատների /18.9%/, հասարակական նշանակության օբյեկտների /10.7%/ և հողերի /12.7%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 606 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2006թ. սեպտեմբերի համեմատ աճել է 5.8%-ով, իսկ 2005թ. հոկտեմբերի համեմատ՝ 21.4%-ով:

2006թ. հոկտեմբերին հանրապետությունում գրավադրվել են 296.21 հա հողեր, որից 1.44 հա՝ Երևանում: Ընդ որում հողերի 96.6% կամ 286.21 հա, գյուղատնտեսական նշանակության հողեր են: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Վայոց Ձորի մարզում՝ 133.26 հա, գյուղատնտեսական նշանակության:

2006թ. հոկտեմբերին հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման, համապատասխանաբար, 13 և 8 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.2%: 2006թ. սեպտեմբերի համեմատ մասնավորեցման գործարքների քանակը աճել է 40.0%-ով, իսկ 2005թ. հոկտեմբերի համեմատ մնացել է անփոփոխ: 2006թ. հոկտեմբերին մասնավորեցման գործարքների բարձր տոկոսաչափն արձանագրվել է Շիրակի՝ 23.8%, ցածրը՝ 4.8-ական %, Սյունիքի, Վայոց Ձորի և Տավուշի մարզերում:

2006թ. հոկտեմբերին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 1662 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2006թ. սեպտեմբերի համեմատ աճել է 4.6%-ով, իսկ 2005թ. հոկտեմբերի համեմատ՝ 7.4%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 15.2%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /33.8%/:

**ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն**